ԵԴ1/1548/01/25
(ՀԿԴ/0149/01/25)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 հուլիսի 2025 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի մայիսի 6-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Արամ Արմենի Մնացականյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 83121825 (ԵԴ1/1548/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ա.Մաթևոսյան) 2025 թվականի մայիսի 12-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1548/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 16-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1548/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հունիսի 30-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0149/01/25 (ԵԴ1/1548/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի 3-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Արամ Մնացականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«(…) նա Միքայել Մինասյանի և Լեոնիդ Արևշատյանի հետ նախնական համաձայնությամբ կատարել է փողերի լվացում՝ ձեռք է բերել և օգտագործել, փաստացի տիրապետել և տնօրինել է հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերի գույք, որը նպատակ է ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը, պատկանելիությունը, իրական բնույթը և ծագման աղբյուրը:*

Այսպես.

Միքայել Մինասյանը և Արմինե Հասրաթյանն իրենց պատկանող և իրենց օրինական եկամուտներին չհամապատասխանող և անօրինական ճանապարհներով ձեռք բերված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, գտնվելու վայրը, գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը և դրանց պատկանելիությունը թաքցնելու նպատակով Միքայել Մինասյանի անվամբ, Արմինե Հասրաթյանին պատկանող «MAM CAPITAL Inc» կազմակերպության անվամբ և Արմինե Հասրաթյանի անվամբ Շվեյցարիայի Համադաշնության «Վեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում բացել են բանկային հաշիվներ, հանդիսացել այդ

հաշիվների իրական շահառուն: Շվեյցարիայի Համադաշնության «Վեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում 2010 թվականին բանկային հաշիվ բացելիս Արմինե Հասրաթյանը, նպատակ ունենալով թաքցնել այդ հաշվում անօրինական ծագում ունեցող հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուտները, մտացածին կեղծ հիմքեր և պատճառաբանություններ է ներկայացրել անօրինական գումարների իրական պատկանելիության, ծագման, եկամտի գոյացման աղբյուրների և իրական բնույթի վերաբերյալ՝ նշելով, որ իր հայր Գրիգոր Հասրաթյանը, ով մոտ 20 տարի եղել է Երևանի քաղաքապետ, 1992-1994 թվականների ընթացքում ներդրումներ է կատարել անշարժ գույքի ոլորտում և մինչև մահը՝ 2001 թվականը, կուտակել է ունեցվածք, որը բաղկացած է եղել արվեստի գործերից, ոսկուց, կանխիկ գումարից և անշարժ գույքից (մոտ 80 տոկոս), 1993 թվականին անշարժ գույքի արժեքը կազմել է մոտ 300.000 ԱՄՆ դոլար, 2001 թվականին անշարժ գույքի արժեքը կազմել է մոտ 2.000.000 ԱՄՆ դոլար, իսկ 2010 թվականին՝ 25.000.000-30.000.000 ԱՄՆ դոլար, միաժամանակ նշել է, որ Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո հողակտորի մեկ քառակուսի մետրի գինը սկսել է բարձրանալ մինչև 5000-7000 ԱՄՆ դոլար, նշել է նաև, որ 1979 թվականից մինչև հաշվի բացման օրվա դրությամբ աշխատել է Երևանի պետական կոնսերվատորիայում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության դասախոս և ստացել է տարեկան մոտ 10.000.000 ԱՄՆ դոլար աշխատավարձ: Այդ կերպ հիմքեր ստեղծելով փոխանցվող կամ հետագայում փոխանցվելիք գումարների օրինականության վերաբերյալ, իրական հնարավորություն ստանալով բացված հաշվեհամարի օգտագործման համար, Միքայել Մինասյանը և Արմինե Հասրաթյանն իրենց վստահելի անձնավորության՝ փաստաբի իրենց պատկանող կազմակերպությունների գործունեության համակարգող Լեոնիդ Արևշատյանի միջոցով, սկսել են կառավարել այդ հաշիվների միջոցով իրականացված ֆինանսական գործարքները, որի արդյունքում ստացել են մեծածավալ ֆինանսական միջոցներ և դրանց օգտագործմամբ (փոխարկմամբ, փոխանցմամբ) ձեռք են բերել Հայաստանի Հանրապետությունում և Իտալիայի Հանրապետությունում գտնվող առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքեր ու

այլ ակտիվներ՝ այդպիսով օրինականացնելով հանցավոր ճանապարհով ստացված գույքը:

Մասնավորապես.

Միքայել Մինասյանը և Արմինե Հասրաթյանը, ունենալով հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու դիտավորություն, վերը նշված հանցավոր սխեմայի կիրառմամբ, օգտվելով փաստացի ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվող և տարբեր ֆիզիկական ու իրավաբանական անձանց ֆինանսական միջոցները քողարկված եղանակով հաճախորդների հանձնարարությամբ հաճախորդների պահանջված հաշիվներին փոխանցելու մասով մասնագիտացված ծառայություններ մատուցող, «Տրոյկա Դիալոգ» կոնցեռնի կազմում գործած «CABOT MARKETING CORPORATION» կազմակերպության, ինչպես նաև նմանատիպ, կրկին փաստացի ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող «EXBOND NETWORKS AG» և «NATAN ASSOCIATES Inc» կազմակերպությունների ծառայություններից և 2010-2017 թվականներին այդ կազմակերպությունների միջոցով քողարկված եղանակով շրջանառելով իրենց ֆինանսական միջոցները, դրանք փոխանցել են Միքայել Մինասյանի անձնական, Արմինե Հասրաթյանի «MAM CAPITAL Inc» կազմակերպության և Արմինե Հասրաթյանի անվամբ Շվեյցարիայի Համադաշնության «Վեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում բացված հաշիվներին: Մասնավորապես, Միքայել Մինասյանը և Արմինե Հասրաթյանը վերը նշված բանկում առկա «MAM CAPITAL Inc» կազմակերպության հաշվին «Cabot Marketing Corporation» կազմակերպությունից 2010 թվականի հուլիսի 22-ին ստացել են 5.000.000 եվրո, 2012 թվականի դեկտեմբերի 29-ին՝ 1.982.000 եվրո, 2010 թվականի հոկտեմբերի 8-ին «EXBOND NETWORKS AG» կազմակերպությունից ստացել են 9.884.994,79 եվրո, Միքայել Մինասյանի անձնական հաշվին՝ «Cabot Marketing Corporation» կազմակերպությունից՝ 2010 թվականի հուլիսի 23-ին ստացվել է 1.000.000 եվրո, Արմինե Հասրաթյանի հաշվին «Cabot Marketing Corporation» կազմակերպությունից 2010 թվականի հուլիսի 27-ին՝ 1.450.000 եվրո, իսկ 2011 թվականի հուլիսի 1-ին «NATAN ASSOCIATES Inc» կազմակերպությունից՝ 5.481.475 եվրո:

Վերը նշված հանցավոր ճանապարհով ձեռք բերված ընդհանուր 24.798.469 եվրո Միքայել Մինասյանը և Արմինե Հասրաթյանն օրինականացրել են՝ «MAM CAPITAL Inc» կազմակերպության, նաև այլ անձանց, այդ թվում՝ Լեոնիդ Արևշատյանի անվամբ հաշվառված տարբեր կազմակերպությունների՝ «SPENSER INDUSTRIAL LP», «PORTI VIA LP», «VOD GROUP LTD» միջոցով այլ ակտիվներ՝ բաժնեմասեր, բաժնետոմսեր, անշարժ գույք ձեռք բերելու եղանակով, որի ընթացքում, հանցավոր ճանապարհով ստացված գումարի ծագման աղբյուրը, տեղաշարժը, պատկանելությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով՝ ինչպես իրենց, այնպես էլ «MAM CAPITAL Inc», «SPENSER INDUSTRIAL LP», «PORTO VIA LP», «VOD GROUP LTD» կազմակերպությունների անունից և նրանց միջև՝ կնքել են ձևական բնույթ կրող վարկային պայմանագրեր, համաձայնագրեր և դրանց հիման վրա կատարել ֆինանսական միջոցների փոխանցումներ՝ այդ կերպ քաղաքացիաիրավական ձևական գործարքների միջոցով հասնելով հանցավոր ծագում ունեցող դրամական միջոցների ներդրմանը շրջանառության մեջ:

Մասնավորապես՝ Միքայել Մինասյանը և Արմինե Հասրաթյանը, Լեոնիդ Արևշատյանի հետ հանցավոր կազմակերպության կազմում, նպատակադրվել են քողարկել հանցավոր ճանապարհով ստացված գումարների ծագման աղբյուրը և տեղաշարժը, թաքցնել ու խեղաթյուրել դրա պատկանելությունը, նշված գումարների միջոցով ձեռք բերել «Շանթ» ՍՊ ընկերության 48 տոկոս բաժնեմասերը: Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Լեոնիդ Արևշատյանը պայմանավորվածություն է ձեռք բերել «Շանթ» ՍՊ ընկերության հիմնադիր և բաժնետեր Արթուր Եզեկյանի հետ՝ «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության միջոցով, 5.000.000 ԱՄՆ դոլարով ձեռք բերել «Շանթ» ՍՊ ընկերության 48 տոկոս բաժնեմասերը: Ստանալով Արթուր Եզեկյանի համաձայնությունը՝ Միքայել Մինասյանը, Արմինե Հասրաթյանը և Լեոնիդ Արևշատյանը ձեռնամուխ են եղել հանցանքն ավարտին հասցնելուն:

Այդ նպատակով փաստացի Միքայել Մինասյանին և Արմինե Հասրաթյանին պատկանող «MAM CAPITAL Inc» կազմակերպության և «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության (որի անունից հանդես է եկել Լեոնիդ Արևշատյանը) միջև 2011 թվականի դեկտեմբերի 19-ին ձևականորեն կնքվել է վարկային պայմանագիր,

համաձայն որի՝ «MAM CAPITAL Inc» կազմակերպությունը պարտավորվել է 5.010.000 ԱՄՆ դոլար պարտքով տրամադրել «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպությանը: Հիշյալ պայմանագիրը կնքելուց երկու օր անց՝ 2011 թվականի դեկտեմբերի 21-ին, «MAM CAPITAL Inc» կազմակերպության հաշվեհամարից 5.010.000 դոլար փոխանցվել է «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության՝ Լատվիայի Հանրապետությունում ժամանակին գործունեություն ծավալած «RIETUMU» բանկի կողմից սպասարկվող LV84RTMB0000620806331 հաշվեհամարին, իսկ մեկ օր անց՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ին, «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության կողմից, վերջինիս պատկանող LV84RTMB0000620806331 հաշվեհամարից 5.000.000 ԱՄՆ դոլար փոխանցվել է Հայաստանի Հանրապետությունում գործող «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող՝ Արթուր Եզեկյանի 220311800316001 հաշվեհամարին՝ «Շանթ» ՍՊ ընկերության 48 տոկոս բաժնեմասերի ձեռք բերման դիմաց: Փոխանցված գումարի արդյունքում «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության հաշվեհամարին մնացած 9000 ԱՄՆ դոլարը փոխանցվել է Լեոնիդ Արևշատյանի LV75RTMB0000601807879 հաշվեհամարին՝ «ծառայությունների վճարի փոխանցում շահառու սեփականատիրոջը» նպատակով:

Արդյունքում՝ 2011 թվականի դեկտեմբերի 27-ին Արթուր Եզեկյանի և «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության միջև կնքվել է «Շանթ» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասի առուվաճառքի պայմանագիր, որով «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպությունն իբրև 97.594.032 դրամով ձեռք է բերել «Շանթ» ՍՊ ընկերության 48 տոկոս բաժնեմասերը:

Որոշ ժամանակ անց Լեոնիդ Արևշատյանը և Միքայել Մինասյանը, նախնական համաձայնության գալով վերջինիս դասընկեր և մտերիմ փոխհարաբերությունների մեջ գտնվող Արամ Մնացականյանի հետ, ձեռնամուխ են եղել արդեն իսկ հանցավոր ճանապարհով ձեռք բերված «Շանթ» ՍՊ ընկերության 48 տոկոս բաժնեմասերի ձեռքբերման իրական բնույթը, ծագումնաբանությունը, պատկանելությունը և տնօրինման եղանակը թաքցնելուն, քողարկելուն ուղղված գործողությունների կատարմանը, որի արդյունքում Արամ Մնացականյանը, ձեռքբերման պահին հատուկ տեղեկացված լինելով «Շանթ» ՍՊ ընկերության 48 տոկոս

բաժնեմասերի հանցավոր ծագում ունենալու մասին, ինչպես նաև նպատակ ունենալով օժանդակել Լեոնիդ Արևշատյանին և Միքայել Մինասյանին, որպեսզի վերջիններս խուսափեն իրենց կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, 2015 թվականի հոկտեմբերի 9-ին «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության հետ բաժնեմասերի առուվաճառքի ձևական գործարքի կնքման միջոցով օրինական տեսք տալով իրենց գործողություններին, իբրև 97.594.032 ՀՀ դրամով ձեռք է բերել «Շանթ» ՍՊ ընկերության 48 տոկոս բաժնեմասերը՝ այդ կերպ ձեռք բերելով, տնօրինելով հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքը: (…)»[1]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 16-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Նախնական դատաքննությունների ընթացքում քննարկելով վարույթի ընդդատության հարցը՝ Դատարանը, վկայակոչելով վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ1/1188/01/23 (ՀԿԴ/0118/01/24) որոշման 13-րդ կետի, ինչպես նաև ՀԿԴ/0149/01/24 (ՍԴ3/0053/01/21) որոշման 13-րդ կետի վերաբերելի հատվածները, դատավարության մասնակիցներին խնդրեց կարծիք հայտնել քրեական գործն ըստ առարկայական ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան փոխանցելու վերաբերյալ՝ հաշվի առնելով նաև այն, որ Արամ Արմենի Մնացականյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումներից պարզ է դառնում, որ վերջինն իրեն վերագրվող հանցանքը ենթադրաբար կատարել է Միքայել Մինասյանի և Լեոնիդ Արևշատյանի հետ նախնական համաձայնությամբ (խմբով), իսկ Լեոնիդ Արևշատյանի գործողություններն, ի թիվս այլնի, ենթադրաբար կատարվել են նրա՝ որպես «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության տնօրենի իր ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:*

- Հանրային մեղադրող Լալա Առաքելյանն, ըստ էության, նշեց, որ թեև Միքայել Մինասյանի վերաբերյալ քրեական գործը, որից անջատվել է Արամ Մնացականյանի վերաբերյալ «մասը», քննվում է կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանքների մեղադրանքներով, այնուհանդերձ անջատված մասն ըստ առարկայական

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 17, թերթեր 118-122:

ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան փոխանցելու հիմքեր առկա չեն, քանի որ Արամ Արմենի Մնացականյանին վերագրված չէ կոռուպցիոն հանցանքի կատարում: Հանրային մեղադրողներն իրենց բացատրություններում նաև չվիճարկեցին Լեոնիդ Արևշատյանի՝ «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության տնօրեն հանդիսանալու հանգամանքը:

- Պաշտպան Գոռ Միքայելյանը նշեց, որ թեև Լեոնիդ Արևշատյանը հանդիսացել է «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության տնօրենը, այնուհանդերձ, նա իր ծառայողական լիազորությունները չի օգտագործել, և ընկերության անունից «պայմանագիրը» կնքել է այլ անձ:

- Մեղադրյալը որևէ դիրքորոշում չհայտնեց:

(...) Արամ Մնացականյանի կողմից Միքայել Մինասյանի և Լեոնիդ Արևշատյանի հետ նախնական համաձայնությամբ (խմբով) կատարված ենթադրյալ հանցանքի փաստերը վերաբերում են նաև այդ խմբի անդամ Լեոնիդ Արևշատյանի՝ ենթադրաբար որպես «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության տնօրենի իր ծառայողական լիազորությունները օգտագործելով «Շանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 48 տոկոս բաժնեմասերը ձեռք բերելուն ու հետագայում «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության հետ Արամ Մնացականյանի կողմից առուվաճառքի «ձևական գործարքի» կնքման միջոցով դրանք վերջինին փոխանցելուն:

Ասվածից հետևում է, որ Արամ Մնացականյանին մեղսագրված է ծառայողական լիազորություններն օգտագործելով փողերի ենթադրյալ լվացմանը հանցակցություն, հետևաբար Արամ Մնացականյանին վերագրվող փաստական հանգամանքներն ապացուցված լինելու կամ չլինելու հարցին անդրադառնալիս, Դատարանն անխուսափելիորեն պետք է հաստատի կամ հերքի կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ փաստեր:

Բացի այդ, քրեական վարույթից մեղադրյալ Արամ Մնացականյանի վերաբերյալ մասն անջատված չլինելու դեպքում նրա մեղադրանքի քննությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262 հոդվածի 2-րդ մասի համաձայն, ընդդատյա կլիներ հենց Հակակոռուպցիոն դատարանին, ուստի քրեադատավարական օրենքի տրամաբանությունից էլ ողջամտորեն ենթադրելի է,

որ նույն ենթադրյալ հանցանքի վերաբերյալ խմբի անդամների մեղադրանքները միաժամանակ և ընդհանուր իրավասության, և մասնագիտացված դատարաններին ընդդատյա լինել չեն կարող:

(…) Ի թիվս վերոգրյալի Դատարանը հարկ է համարում նշել, որ Արամ Արմենի Մնացականյանին մեղսագրվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարում, որը ներառված է «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը» սահմանող ՀՀ նախկին քրեական օրենսգրքի N6 հավելվածում, հետևաբար հաշվի առնելով այն, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելիս հղում է կատարում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հավելվածին, փվյալ դեպքում այդ հանգամանքը ևս պետք է հաշվի առներ սույն վարույթի ընդդատության հարցը որոշելիս:

Այլ կերպ՝ Արամ Մնացականյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներկայացված մեղադրանքն իր հերթին կարող էր բավարար լինել սույն քրեական գործն ըստ առարկայական ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը հանձնելու համար:

Այսպիսով.

Դատարանը գտնում է, որ Արամ Արմենի Մնացականյանին մեղսագրված հանցանքը կոռուպցիոն բնույթի է, այն ներառված է ինչպես արարքը կատարելու ժամանակ գործող ՀՀ նախկին քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը» սահմանող N6 հավելվածում, այնպես էլ ՀՀ գործող քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկը» սահմանող N1 հավելվածում, որպիսի պայմաններում թիվ ԵԴ1/1548/01/25 քրեական գործն ըստ առարկայական ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելուց բացի այլ որոշում կայացվել չի կարող: (…)»[2]:

7. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հունիսի 30-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Արամ Մնացականյանի մեղադրանքում բացակայում*

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 29-35:

է այն ձևակերպումը, որ նա ենթադրյալ արարքը կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ դատարանում վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրան ներկայացված մեղադրանքով, քանի որ առկա է անձնական պատասխանատվության սկզբունքը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ մեղադրյալ Ա.Մնացականյանի վերաբերյալ մասն անջատված չլինելու դեպքում մեղադրանքի քննությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ընդդատյա կլիներ Հակակոռուպցիոն դատարանին, ապա անհրաժեշտ է իրողությամբ փաստել, որ այս իրավիճակում պատկերն այլ է, այսինքն՝ համաձայն նորմի, եթե մինչդատական վարույթում միացված վարույթներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ապա մեղադրանքը քննում է Հակակոռուպցիոն դատարանը, սակայն մինչդատական վարույթում մեղադրյալ Ա.Մնացականյանի վերաբերյալ մասն անջատվել է:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ու 01.07.2022թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի N 1 հավելվածի համաձայն՝ «Հոդված 296. Փողերի լվացումը» ներառվել է կոռուպցիոն հանցանքների ցանկում, իսկ 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-31-Ն օրենքի համաձայն՝ «Հոդված 7. Օրենսգրքի հավելված N 1-ում՝ 1) «Հոդված 296. Փողերի լվացումը» բառերը փոխարինել «Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով. (...)»,մինչդեռ Արամ Մնացականյանին մեղսագրվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարում, որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, այսինքն՝ ցանկացած դեպքում անհնար է եզրահանգել, որ Ա.Մնացականյանին մեղսագրվել է Հայաստանի

Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի կատարում:

Անդրադառնալով այն փաստին, որ Արամ Մնացականյանին մեղսագրվել է ծառայողական լիազորություններն օգտագործելով փողերի ենթադրյալ լվացման հանցակցություն, Դատարանը վերստին փաստում է, որ մեղադրանքում բացակայում է այն ձևակերպումը, որ Ա.Մնացականյանը ենթադրյալ արարքը կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ սույն դեպքում հանցակցությամբ կատարված արարքին կոռուպցիոն բնույթ տալն անհնար է, քանի որ գործում է անձնական պատասխանատվության սկզբունքը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, դուրս է կոռուպցիոն հանցանքների ցանկից:

(...) Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության դրսևորման հիմնական ձև, պետք է իրականացվի որոշակի սահմաններում, որի չափանիշներից մեկն էլ քրեական գործի ընդդատության ինստիտուտն է, որը սահմանում է, թե որ դատարանն է իրավասու քննել գործը, որպեսզի երաշխավորվեն անձի՝ դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իրավունքները, բացառելով քրեական գործը քննելու պատշաճ դատարանի որոշման վերաբերյալ վեճերը, որպիսի պայմաններում Դատարանը հաշվի առնելով քրեական գործով քննության առարկան հանդիսացող ենթադրյալ հանցանքի բնույթը և մինչդատական վարույթում մեղադրյալին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումները, այն է՝ Արամ Մնացականյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ նրա կողմից ենթադրյալ փողերի լվացումը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0149/01/25 (ԵԴ1/1548/01/25) քրեական գործն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված

կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0149/01/25 քրեական գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար: (...)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 50-57:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա

ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ Ա.Մնացականյանին մեղսագրված է Լ.Արևշատյանի՝ ենթադրաբար որպես «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության տնօրենի իր ծառայողական լիազորությունները օգտագործելով ենթադրյալ փողերի լվացմանը հանցակցություն, գտել է, որ քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է, որ քրեական վարույթից մեղադրյալ Ա.Մնացականյանի վերաբերյալ մասն անջատված չլինելու դեպքում վերջինիս մեղադրանքի քննությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդդատյա կլիներ Հակակոռուպցիոն դատարանին[7]:

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ Ա.Մնացականյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջինիս կողմից ենթադրյալ փողերի լվացումը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, գտել է, որ քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ սույն գործի նյութերի, այդ թվում, մեղադրական եզրակացության[9] ուսումնասիրությունից հետևում է, որ Արամ Մնացականյանի վերաբերյալ թիվ 83121825 քրեական վարույթն անջատվել է թիվ

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 133-156:

83160718 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթից, և վերջինին վերագրվում է Մ.Մինասյանի և Լ.Արևշատյանի հետ նախնական համաձայնությամբ ենթադրյալ փողերի լվացում: Վերոգրյալից բխում է, որ Արամ Մնացականյանին ներկայացված մեղադրանքն անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա հիշյալ կոռուպցիոն վարույթի՝ հետ[10]:

Հետևաբար, հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ գտնում ենք, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Արամ Արմենի Մնացականյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

[10] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 87-166: